ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

07.02.2014թ.
212-ի 4

Պետական եկամուտների կոմիտեի
նախագահ պարոն Գագիկ Խաչատրյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Խաչատրյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնին են դիմել "Դեմ եմ" նախաձեռնության անդամները եւ խնդրել են իրենց օգնել տեղեկատվություն ստանալու հարցում:

Ուստի, ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացվող եկամտային հարկի ամփոփ հաշվարկի (հարկային հաշվետվության) էլեկտրոնայն ձեւը հնարավորություն տալի՞ս է գործատուներին ինքնուրույն լրացնել կամ խմբագրել պարտադիր կուտակային վճարի համապատասխան տողը:
2. Կարո՞ղ են արդյոք գործատուները չհաշվարկել եւ չփոխանցել պարտադիր կուտակային վճար այն աշխատողների համար, ովքեր մինչեւ "Կուտակային կենսաթոշակների մասին" ՀՀ օրենքի պարտադիր բաղադրիչի հոդվածների սահմանադրականության հարցի լուծումը չեն ցանկանում վճարել կուտակային վճար եւ հրաժարվել են ֆոնդ եւ կառավարիչ ընտրելուց:
3. Եթե այո, ապա ի՞նչ եղանակով, եւ ինչպե՞ս պետք է արձանագրեն չվճարելը՝ ՊԵԿ-ին պատշաճ հաշվետվություն ներկայացնելու համար:
4. Եթե ոչ, ապա ֆոնդ եւ կառավարիչ չընտրած քաղաքացիների համար հաշվարկվող եւ փոխանցվող գումարները որտե՞ղ են պահվելու մինչեւ ՍԴ որոշումը:
5. Ո՞ր իրավական ակտով (ակտերով) է (են) սահմանված մինչեւ ՍԴ որոշումը **ֆոնդ եւ կառավարիչ չընտրած** քաղաքացիների համար հաշվարկվող եւ փոխանցվող գումարները պահելու պայմանները եւ կանոնները:
6. Խնդրում ենք տրամադրել այդ իրավական ակտի (ակտերի) պատճենները:

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան